



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material

9589

281.6q  
U - 63v

2

ԱՅԵ ՏԵՐԵ

Հայոց  
ՀԱՅՈՑ



05 OCT 2011

79014. 45

ՅԱՅՏՆԻ ՄԱՐԴԿԱՆՑ ԿԵՆՍԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

281.69

G-63v

ՀՐԱՏ. ՅՈՎՃԱՆՆԵՍ ԱՐԱՄԵԱՆՑԻ

Հ. G.S  
238

# ՄԵԾՆ ՆԵՐՍԵՍ

281.69  
Գ-63v

1005  
1545  
0000  
91545  
00

(ՀԱՄԱԴՐԱ ԿԵՆՍԱԳՐՈՒԹԻՒՆ)



Ա. Պետրովիս

ԳՈՒՅՆԻՆԵԱՆ ԱՐԱԳԱՆՏՎԱ ՏՊԱՐԱՆ

1903

28 JUN 2013

9589

Дозволено цензурою. С.-Петербургъ, 4 Декабря 1902 года.

2465-91

(238-90)

«Пушкинская Скоропечатня», Лештуковъ, 4.



ՄԵԾՆ ՆԵՐՍԵՒ

«Այլ էր սա զայելուց դէմքով, մարդաբէր, սուրբ, զգաստ, սաստիկ իմաստոն... Նեղելոց ու տարակուսելոց օգնական և զերակացու, և ջատագով ամենալի գըկելոց...»:

Փառապ. Բէպանդոցի:

## Ա.

Չորրորդ դարն էր: Հայաստանը ներկայացնում էր մի մոալ պատկեր: Հայ ժողովուրդը տառապում էր ներքին ու արտաքին հարուածներից: Նրա մասին հոգացողը թագաւորն ու նախարարները պիտի լինէին, բայց նրանք էլ զբաղուած էին երկառակութիւններով: Կերն ու խումբ, որսն ու կանանցը, անձնական թշնամութիւնն ու վրժառութիւնն աւելի էին զբաւում նրանց, քան թէ ժողովրդի շահերը, երկրի խաղաղութիւնը:

Թշնամանում էին նախարարները թագաւորի հետ, թագաւորը նախարարների հետ—տուժողը լինում էր ժողովուրդը: Երկառակութիւն, առելութիւն էր զարթնում նախարարների մէջ—հարուածը հասնում էր գարձեալ ժողովրդին:

Պարզ է, որ ալսպիտի պայմաններում երկրի անտեսական վիճակը չէր կարող բարւոքուել, հա-

սարակական կեանքը չեր կարող ցանկալի առա-  
չափիմութիւնն ունենալ:

Այս, ճնշուած էր հայ ժողովուրդը և այդ  
ճնշումն աւելի սասակացնում էին օտարները—  
հարեան պետութիւնները:

Ահա քրիստոնեայ Յունաստանը արեմուա-  
քում, իսկ կրակապաշտ Պարսկաստանը—արևել-  
քում:

Երկու անհաշտ թշնամիներ գէմ առ գէմ կան-  
գնած՝ անվերջ ընդհարումներով ու պատերազմնե-  
րով, իսկ փոքրիկ հայաստանը նրանց մէջ տեղում:  
Ի՞նչ անել: Միանալ, օգնել հաւատակից լոյներին,  
բայց այն ժամանակ վրիժառու պարսիկները քար  
ու քանդ կանէին իրանց սահմանակից դաւառները,  
իսկ վերջնական յաղթութիւնից լետոյ ամբողջ  
հայաստանը կ'զարծնէին հրի ու սրի բաժին:

Օգնել պարսիկներին... բայց այն ժամանակ  
էլ նոյն խաղը կ'խաղալին լոյները, վրիժառու-  
թեան նոյնպիսի հարուածներ կ'հասցնէին Յու-  
նաստանին սահմանակից հայ դաւառներին:

Ալդպիսով երկու վառ կրակի մէջ էր ընկած  
հայաստանը: Այդ գրութիւնից նրան ազատել կա-  
րող էր միայն թագաւորի ու նախարարների հա-  
մերաշխ գործունէութիւնը, հեռաւես քաղաքակա-  
նութիւնը—յատկութիւններ, որոնցից միանդամայն  
զուրկ էին նրանք:

Այս, չկար համերաշխութիւն ու խելացի քա-  
ղաքականութիւն, ուստի և հայաստանը շատ ան-  
գամ անտեղի զոհ էր դառնում թշնամու հարուա-  
ծին. հայ ժողովուրդը հայածանքի էր ենթարկում  
յոյների կամ պարսիկների կողմից, իսկ երբեմն եր-  
կու կողմից էլ միաժամանակ:

Դառն վիճակ: Եւ որքան երկար ժամանակ է  
ճաշակել հայր այդ դառնութիւնը, որքան անմեղ  
զոհեր է տուել նա:

Ժողովուրդը ինքը չունէր ներքին ոյժ, որ  
կարողանար սեփական չանքերով չարիքի առաջն  
առնել, չունէր հասունացած զիտակցութիւն, որ  
իր ձեռքով սանձահարեր ներքին ու արտաքին  
թշնամիներին: Մնում էր, որ աւելի բարձր կան-  
գնած անհատները պաշտպանէին նրա շահերը:

Երբեմն նախարարների, երբեմն հոգեորական-  
ների շարքից էին գուրս զալիս այդ անհատները:  
Բայց առհասարակ հոգեորականութիւնն էր աւելի  
ծօտ ըուն ժողովրդին, ուստի և նրա ներկայացու-  
ցիչներն են եղել աչքի ընկնող գեր խաղացողները:

Ահա մի ալդպիսի ներկայացուցիչ էր և Ներ-  
սէս Պարթև, որը լուսանանչ աստղի նման առ-  
ժամանակ փայլեց հայկական խաւար հորիզոնում:

Ներսէս... որքան դրաւիչ է ալդ անունը, որ-  
քան քաղցր լիշողութիւններ են կապուած նրա  
հետ: Նա իր ամբողջ կեանքում սիրել է հայ ժո-

զովրդին և աշխատել է նրա օգտին: Նա ցոլց է տուել մեծ զօրծունէութիւն, ուստի և արժանացել է «մեծ» տիտղոսին: Մեջն Ներսէս... Ո՞վ էր նա:

Բ.

Գրիգոր Լուսաւորչի ցեղիցն էր Ներսէս: Նրա հայրն էր Աթանազինէ, իսկ մայրը՝ Բամբիշ: Նա ծնուել է մօտաւորապէս 327 թուականին: Դրժաղդաբար չկան տեղեկութիւններ նրա մանկութեան ու պատանեկութեան մասին: Յալտանի է միայն այսքանը, որ չափազանց լճունակ ու ժրաշան երեխաց էր Ներսէս:

Տարիներն անցնում էին միմեանց յետեից և աւելի ու աւելի անհրաժեշտ է զառնում նրա կրթութեան մասին հոգալը: Բայց ի՞նչպէս: Հայերը դեռ չունէին սեփական զիր ու զրականութիւն, չունէին կանոնաւոր գաղրոց ու կրթարան: Հարկաւոր էր դիմել օտար երկիր, օտարի օգնութեան:

Ահա պատանի Ներսէսը կապազովկիալի կեսարիա քաղաքումն է: Հմուտ ուսուցիչների ձեռքի տակ նա սովորում է լունարէն լեզուն և այլ զիտութիւններ: Նրա հետ սովորում է և իր նորատի կինը՝ Սանտուխար:

Մարդ ու կին ծեռք ծեռքի տուած աշխատում են զիշեր ցերեկ, սովորում են անզագար,

որպէսզի վերջը հայրենիք վերադառնան և հայ ժողովրդին օգտակար լինին:

Բայց զժբախտ Սանտուխարին չէր վիճակուած իր աշխատութեան արդիւնքները վայելել: Ամուսնական կեանքի երրորդ տարին նա վախճանւում է, իր յետեից որբ թողնելով մի զեռահասակ մանկիկ Սահակ անունով: Ահա այդ մանկիկն էր, որ տարիներ յետով կաթողիկոս դարձաւ և իր զործերով անթիւ բարիքներ հասցըեց հայ ժողովրդին \*):

Կնոջ վաղաժամ կորուսար ծանր է ազգում Ներսէսի վրայ: Տիսուր ու արտում են անցնում նրա օրերը, գառնանում է նրա կեանքը. բայց զիտութեան ծարաւը նորից եռանդ է ներշնչում, նորից սահպում է աշխատել:

Աշխատում է Ներսէսը, սովորում է շարունակ: Կեսարիալից նա անցնում է կ. Պոլիս, ալղաւեղից վերադառնում է Հայաստան և մտնում պալատական ծառայութեան:

Նա զառնում է Արշակ թաղաւորի սենեկապետն ու մաերիմը:

Գրաւիչ էր Ներսէս իր արտաքինով. բարձր հասակ, գեղեցիկ դէմք, երկար մազեր, վայելուշ կազմուածք—ահա այդ զրաւչութեան պատճառը.

\*) Տես Եր. [թ.] Աշհակ Պարթև գրքով:

բայց միայն արտաքինը չէր նրան ուշադրութեան  
արժանացնողը:

Կարծ ժամանակամիջոցում նրա հեղ բնաւո-  
րութիւնն ու խաղաղ վարքը, համեստութիւնն ու  
խոնարհութիւնը գրաւում են ոչ միայն նախա-  
րարների, այլ և ամբողջ ժողովրդի սէրը:

Այս, ամենքը սիրում ու յարգում են Ներսէ-  
սին և կենդանի գործը գալիս է հաստատելու այդ  
բուռն սէրը:

Գ.

Փառէնի մահից յետով թափուր էր մնացել  
կաթողիկոսական գահը: Հետզհետէ խանգարւում  
էին եկեղեցական կարգերը, աւելանում էր բնդ-  
հանուր դժոնութիւնը: Հարկաւոր էր մի անձնուեր  
հովիւ, որ բարւոքէր այդ կարգերը, որ հոգեկան  
միիթարութիւն տար ժողովրդին և իր գործունէ-  
ութեամբ միշտ պաշտպանէր նրա շահերը:

Թէ բուն ժողովուրդը և թէ նախարարները  
այն կարծիքին էին, որ կաթողիկոսական գահը  
անարժան մարդկանցից հեռու պահելու համար,  
պէտք է յանձնել Գրիգոր Լուսաւորիչի սերուն-  
դին:

Բայց ով էր այն մարդը, որ կարողանար այդ  
փոթորկալի ժամանակում միշտ բարձր պահել կա-

թողիկոսական վեհ կոչումը: Ո՞վ էր այն գործիչը,  
որ կարողանար արդարացնել լնդիանրութեան յու-  
սերը... Ներսէսը, թագաւորի սենեակապետ, գեղա-  
տեսիլ ու վալելակազմ Ներսէսը: Ամենքի բերա-  
նից նրա անունն էր հնչում, ամենքի ցանկութիւնն  
էր նրան տեսնել հալրապետական գահութիւնը:

Իսկ ինքը ներսէսը... նա հակառակ էր այդ  
բանին. նա գէմ էր ժողովրդի, նախարարների ու  
թագաւորի ցանկութեանը և առանց երկիւղի ցոյց  
էր տալիս նրանց կատարած պէս-պէս մեղքերը,  
ապերախտութիւնն ու երկպառակութիւնը, չարու-  
թիւնն ու փոխադարձ թշնամութիւնը:

Ո՞րպիսի սրտաշարժ տեսարան էր:

Ահա արքունիքը: Գահի վրայ նստած է թա-  
գաւորը, նրա շուրջն են հաւաքուած նախարար-  
ներ, պալատականներ ու հոգեորականներ. այնուեղ  
է և Ներսէսը, որը իր պաշտօնի համեմատ բռնել  
է արքունական թուրն ու կամարը. իսկ դրսում  
խմբուած է ամբոխը:

— Ներսէսը, Ներսէսը պիտի լինի մեր կա-  
թողիկոսը, մերթ ընդ մերթ լուռում է ամբախի  
բացականչութիւնները:

— Ներսէս, Ներսէս. կարծես իբրև արձա-  
գանը հնչում է մեծամեծների բերանից:

Բայց այդ բնդիանուր պահանջի գէմ դեռ հա-  
կառակում է Ներսէս: Նա պատմում է իր անար-

ժանութեան մասին, յետոյ սպառնալիքներ է կարդում ապագայ խստութեանց մասին, բայց անօդուտ: Հասարակութիւնը միաբերան կրկնում է իր պահանջը և տեսարանն աւելի սրատաշրժ է դառնում:

Ներսէսի ծեռքից խլում են սուրն ու կամարը, մերկացնում են նրան պալատական դարդերից, խուզում են գանգրագեղ մագերը, հազցնում են կղերական հազուսար և ծերունի Փաւստոս եպիսկոպոսի ծեռքով սարկաւագ են ծեռնազրում նրան:

Մնում էր ամենազլխաւորը — կաթողիկոսական ծեռնազրութիւնը, որի համար հարկաւոր էր Կեսարիա գնալ: Առանց գանգազելու պատրաստութիւն են տեսնում և հանապարհ ընկնում: Ի՞նչպիսի յաղթական գնացք, ի՞նչպիսի ցնծութիւն:

Արքունական կառքի վրայ բազմած է Ներսէս Պարթեր: Նրան ուզեկցում են բազմաթիւ նախարարներ (26), եպիսկոպոսներ (13) և չորս հազարի չափ հեծեալ զինւորներ:

Ամեն տեղ ժողովուրդը հիացմունքով նայում է այդ տեսարանին և ցնծազին բացականչութիւններով թնդացնում օդր:

Եթախումբը հասնում է վերջապէս Կեսարիա: Այդական սիրալիքը ընդունելութիւն է ցոլց տալիս յոյն արքեպիսկոպոս Եւսեպիոսը:

Նա ընդունում է Արշակ թաղաւորի նամակն ու ընձաները, ապա գումարում է շրջակալքի լոյն եպիսկոպոսներին և փառահեղ հանդիսով կատարում ծեռնազրութեան կարգը:

Դրանից յետոյ շքախումբը նոյնպիսի հանգիսով, նոյնպիսի ցնծութեամբ վերագառնում է Վաղարշապատ և Ներսէս բազմում է հայրապետական գահը: Հէնց այդ օրուանից էլ սկսւում են նրա եռամդուն գործերը: Գործեր, որոնք անմահացրել են Ներսէսի անունը պատմութեան մէջ, որոնք «մէծ» ախտօսին են արժանացրել նրան:

Մեծն Ներսէս... ի՞նչ է արել նա:

Դ.

Ներսէս կրթուտծ ու անձնազոհ մարդուն յասուկ եռանդով սկսում է իր գործունեութիւնը:

Նա վերականգնեցնում է իր հայրերի հաստատած եկեղեցական կարգերը և սահմանում է նաև նորերը: Բայց հարկաւոր էր այդ բոլորը կանոնական վճիռներով հաստատել, ուստի Մեծն Ներսէս Աշտիշատ քաղաքում հոգևորականներից ու աշխարհականներից բազկացած մի ժողով է գումարում և նրանց որոշումով հաստատում է իր բարեկարգութիւնները:

Զուտ կրօնական-եկեղեցական բարեկարդութեան շուրջը չէր կենարոնացած Ներսէսի գործունէութիւնը: Աչ: Նա երկար ու ծիգ ապարիներ ապրել էր Յունաստանում, դիտել էր այնտեղի կեանքը, տեսել էր բարենպատակ հիմնարկութիւնները և ալդ բոլորը մեծ ազդեցութիւն էին արել նրա վրայ: Այդ Յունաստանումն էր: Իսկ հայաստանում:

Այստեղ էլ նա ուշի ուշով հետեւում է հասարակական կեանքին, ուսումնասիրում է ժողովրդի վիճակը, նրա բազմազան կարիքները: Նա մտնում է ամեն աեղ, խօսում է ամենքի հետ, խրատում է, լորդորում ու միտթարում է ամենքին:

Այս, նա դառնում է ճշմարիտ բարեկամ բոլոր ճնշուածների ու հալածուածների, խեղների ու անօդնականների:

Միրում է նրան ժողովուրդը: Գթառատ հայր են անուանում նրան բոլոր թշուառ ու բազգադուրկ մարդիկ: Եւ իզուր չէր ալդ սէրը:

Մեծն Ներսէս այն տեսակ հոգեռականներից չէր, որ իրանց անձնապահութիւնը ցոյց են տալիս միայն ծոմ ու ազօթքութիւնը որ ժողովրդի ամեն մի ցաւի միակ գարմանը Բարձրեալի կամքն են համարում, ամեն մի փրկութիւն միայն Նախախնամութիւնից են սպասում:

Ոչ, նա ուսումնասիրում է հասարակական չարիքները և կենդանի գործով, շօշափելի միջոցներով աշխատում է օգնել թշուառներին, բուժել ժողովրդի վերքերը: Նա հասարակական բարենորոգիչ էր՝ բառիս ըուն նշանակութեամբ:

Երկրի զանազան կողմերում կալին բազմաթիւ բորոտներ, ուրուկներ (բոստներ) և զանազան վարակիչ ախտեր ունեցողներ: Հասարակութիւնը անխողնորէն հալածում էր նրանց, գուրս էր քշում զիւղերից ու բաղաքներից— իբրև օրէնքով պիղծ համարուածների: Ամայի տեղերն էին սրանց բնակարանները, բարձի տեղ չոր բարերն էին ժառանգածների, մածկոցի տեղ— մացառները: Նրանք աշույում, ծածկոցի տեղ— մացառները: Նրանք աշբից հեռացած ու հասարակութիւնից հալածուած էին և այդպիսի զրութիւնը աւելի էր տանջում նրանց, մարմնական վերքերի վրայ աւելացնելով և բարոյական վիշտը:

Տեսնում է ալդ ամենը Մեծն Ներսէս և կարծ ժամանակում բազմաթիւ հիւանդանոցներ ու ապաստարաններ է հիմնում նրանց համար: Թեթեանում է թշուառների վիճակը, միտթարում են բազից ու մարդկանցից հալածուածները:

Բորոտներից և ուրուկներից ոչ պակաս անխնամ էին որբերն ու ձերերը, չքաւորներն ու օտարականները: Ներսէս գրանց համար էլ հիմնում է աղքատանոցներ ու իշեաններ:

Այդ բոլոր հիմնարկութիւնները, ինարկէ, պահանջում էին մեծամեծ ժախսեր, ուստի Մեծն Ներսէս կարգադրում է, որ զիւղերն ու քաղաքները շարունակ որոշ առուրք վճարեն իրանց հասովմներից՝ հայից ու բրդից, կաթից ու իւղից...

Նա բոլոր բարեգործական հաստատութիւնների վրայ ընդհանուր տեսուչ է կարգում իր հաւատարիմ սարկաւագին Խադ. Կարնեցուն, իսկ ինքը շարունակում է իր բեղմնաւոր գործունէութիւնը՝ ուրիշ ասպարէզներում:

Մինչեւ այդ ժամանակ եպիսկոպոսներն ու վանականները ապրում էին զիւղերում ու քաղաքներում՝ ընտանիքների մօս: Ներսէս ալգալիսի կենցաղավարութիւնը անվայել է համարում հոգեռականութեան համար, ուստի և նրանց համար լատուկ ընակարաններ է շինում՝ եպիսկոպոսարաններ ու եղբայրանոցներ անուանելով և նրանց վրայ առանձին վերահակիչներ է նշանակում:

Հարկաւոր էր վանքերի համար էլ որոշ եկամուտ դանել և դրանով հոգեռականների համար անկախ զրութիւն ստեղծել: Այդ նպատակով Մեծն Ներսէս թողլ է տալիս, որ վանքերի մէջ թաղեն թագաւորներին, իշխաններին ու դօրավարներին, որպէսզի փոխարէնը զիւղեր ու ազարակներ նուիրեն: Այդ միջոցը հետզհետէ աւելացնում է եկեղեցական կալուածները:

Կրթական գործն էլ չի վրիպում մեծ բարենորոգչի աչքից: Նա բաց է անում վարժոցներ, որաեղ սովորեցնում էն յունարէն և ասորէրէն, որովհետեւ հայերը գեռ չունեին սեփական տառեր ու զբականութիւն: Ահա այդ վարժոցներում կրթուած աշակերաններն էին, որ ապագայում հայկական դպրութեան հիմքը զրին: Ահա զբանց զբլիւաւորն էր հայկական տառերի հնարող Մեսրոպ Մաշտոցը \*): Ներսէսի ծեռնասուն աշակերար:

Բայց զբանով գեռ չի վերջանում բարենորոգութիւնների երկար շղթան: Ընտանեկան կեանքն ու վատ սովորութիւններն էլ զրաւում էն ներսէսի ուշազբութիւնը: Նա արգելում է մօտիկ ազգականների ու բարեկամների առուսնութիւնը, աչքի առաջ ունենալով այդ տեսակ ամուսնութեան թէ առողջապահական և թէ բարոյական վնասակարութիւնը:

Նա խսախւ արգելում է մեռելների վրայ հեթանոսների նման անպատշաճ սուզեր կատարելլ: Բայցի այդ բոլորից նա առանձին կանոններ է հաստատում, որ աէրերն ու ուսուցիչները, ծնողներն ու իշխանները միշտ քաղցր վարւին իրանց ծառաների, գերիների, աշակերտների և առհասարակ կրտսերների հետ. չճնշեն նրանց, չ'նեղեն, չ'հարրատահարեն:

\*): Տես Ե. Թ. «Մեսրոպ Մաշտոց»:

Ահա այդքան բազմաթիւ էին Ներսէսի չանցերը հայ ժողովրդի բարօրութեան համար. այդքան բազմաթիւ էին նրա բարենորոգումները հասրակական ասպարէզում:

Բայց բաւական չէր կանոններ հաստատելոր, հարկաւոր էր և իրագործել. ուստի Ներսէս իր մասնաւոր կեանքով աշխատում էր օրինակ դառնալ ժողովրդի համար, աշխատում էր քաջալերել նրան: Նա ամենը ի ընկերն ու բարեկամն էր, բարողին էր ու խորհրդատուն: Նա իր ծեռքով խնամում էր հիւանդներին, լուանում ու կապում էր նրանց վերը երբ. օգնում էր կարօտեալներին, միւթարում էր թշուառներին:

Այս բոլորից յետոց զարմանալ, արգեօք, որ ժողովուրդը նրան սուրբ է համարում, որ պատմութիւնը նրան «Մեծ» անունն է տալիս...

Այս, մեծ էր Ներսէսը իրեւ պարտաճանաչ հովիւ և իբրև հասարակական բարեկարգիւ բայց նա նշանաւոր դեր է կատարել և իբրև նշանաւութեան պաշտպան ու բաղաքական դորձիւ:

b.

Վ

Ներսէսի հալրապետութեան առաջին տարիները խաղաղ էին անցնում: Նա հաշտ ու համերաշխ էր Արշակ թագաւորի հետ և միշտ էլ աշակցութեան էր դառնում նրա կողմից:

Բայց նա ամեն բանից աւելի սիրում էր արդարութիւնն ու նշմարաւութիւնը: Հարկ եղած զէպրում նա աներկիւղ ամենը երիսովներ առաջ նրանց մեղքերը, առանց խնամքով զիբերը կամ անձնական յարաբերութիւնները:

Ահա մի այլպիսի զէպր ամսուկանքուն չըտ սառնութիւնը դէպի Արշակը, ապանութիւնը, որ վերը ի վերջոյ ատելութիւն դարձաւ և միանդամայն կարեց հայ ժողովրդի երկու պէտերի փօխագարձ յարաբերութիւնները:

Արշակ թագաւորի կասկածամասութիւնն ու անօրէն վարմունքն էր զրա պատճառը. ահա թէ ինչպէս:

Արշակի եղբօրորդին՝ Գնէլ իր բարձր կրթութեան ու բազմակողմանի ընդունակութիւնների շնորհիւ մեծ յարգանք ու պատիւ էր վայելում արքունիքում: Շատերն էին նախանձում նրան, բայց ամենից աւելի նախանձողն էր Տիրիթը՝ Ելի հօրեղբօր որդին: Անձնական փառասիրունն էր այդ նախանձի պատճառը: Բայց փայրութեան հետ խառնուեց և ուժեղ խանդը, որ և առաջացրեց անսպասելի չարիքներ:

Գնէլը ամուսնացած էր Սիւնեաց Անդովի նախարարի աղջկայ՝ Փառանձեմի հետ: Գրաւէ էր Փառանձեմը իր զեղանի աեսքով, պէս-պէս յատկութիւններով: Զափաղանց նախանձում էր Տիրիթը իր

հօրեղբօր որդուն՝ Գնէլին, որը փառք ու պատուի հետ միասին ունէր և մի ազգպիսի զեղեցիկ կին։ Նա ինքը սիրում էր Փառանձեմին և պատրաստ էր ամեն ինչ անելու, որպէսզի նրա ամուսինը դառնալ։

Նախանձն ու խանզը կարում էն Տիրիթի հանդսառութիւնը։ Նա սկսում է քսութիւններ անել թագաւորի առաջ, միշտ չարտխօսում է Գնէլի մասին, դարաններ է զործում նրա դէմ և վերջապէս հասնում է իւր նպատակին։ Կասկածամիտ Արշակը հալածանը է սկսում Գնէլի դէմ։ Մի անդամ էլ Նաւասարդի աօնի պատճառով նրան Գտունի է հրաւիրում և այնուեղ նենդութեամբ սպանել առլիս։ Ո՞րքան սրաաշարժ, ո՞րքան եզերզակոն ձեռով էն նկարազրում հայ պատմիչները արդ սերպործութիւնը։

Նաւասարդի աօնն էր։ Թագաւորի մօտ էին հրաւիրուած երկրի իշխաններն ու նախարարները։ Գնէլն էլ իր կնոշ հետ շասպում է ներկայ լինելու հանդիսին, բայց աեզ հասնելուն պէս նրան ձերլակալում էն և կնոշից հեռացնում։

Փառանձեմը խօսին հասկանում է մօտապուտ չարիքը և առանց զանդաղելու զիմում է Ներսէսի օդնութեանը։

Առաւօհեան ժամերգութիւնը զեռ չէր վերչացել, երբ զմբաղդ Փառանձեմը եկեղեցի է մրտ-

նում և աղիողորմ բացականչութիւններով հայոց հայրապետին զիմում։ — Վայ, կորաւ իմ անձը, ասում է նա, ոզորմիր սուրբ բահանակապետ։ Իմ ամուսնուն՝ պատանի Գնէլին, որին զու սիրում էիր, ուզում են առանց մի որեւէ յանցանքի ոչընչացնել... Շատապիր, սուրբ հայրապետ, շատապիր օդնելու անօդնական Գնէլին...»

Ներսէսը խօսին զնում է Արշակի մօտ, բայց վերջինս սամուրէ մուշատկի մէջ զլուխը ծածկած իրան քնած է ծեւցնում, մինչեւ որ զահնապետը րերում է Գնէլի սպանման լուրը։

Այդ վարմունքը սասափիկ զարացնում է Ներսէսին։ Նա յանդիմանում է Արշակին, անէծը ու նզովը է թափում նրա զլխին և բարկացած հեռանում է։ Հէնց այդ օրուանից էլ թագաւորի ու կաթողիկոսի յարաբերութիւնները հետպհեաէ սկրսում են սառել։

Իսկ չարասիրա Տիրիթը, կարողանում է նա արգեօք հասնել իր նպատակին՝ ամուսնանալ Փառանձեմի հետ։ Ո՞չ։ Գնէլի թաղման ժամանակ Արշակը ինքը աեսնում է, և հաւանում Փառանձեմին և որոշում է նրան իր կինը դարձնել։

Հէնց այդ յանկութիւնը սախողում է նրան սպանել առաջ դաւաճան Տիրիթին։ Դրանից յեսոյ թագաւորի հրամանով Փառանձեմին բերում են արքունիք։ Նա ապրում է այնուեղ, բայց բաւական

չի համարում իբրև հարհ ծառայել Սրշակի հա-  
նովքին. նա ձգում է թաղուհի դառնալ, ուստի  
և համոզում է պալատական քահանային ո. հա-  
ղորդութեան հետ թոյն խառնել և այդ միջոցով  
թունաւորել Սրշակի կնոջ՝ Ողոմալիադալ թաղու-  
հուն: Վախճանւում է թաղուհին և Փառահնձնը  
դառնում է Սրշակի խոկական կինն ու հայոց թա-  
գուհին:

Ալդքան չարագործութիւններից յետոյ կարող  
էր, արդեօք, զթառաւ ու նշանառաւ Ներսէսը  
հաշտ աչքով նայել Սրշակի վրայ, կարող էր նրա  
հետ առաջուայ յարարերութիւնը շարունակել:  
Իհարեւ, ոչ:

Զ.

Ներսէս թողնում է քաղաքական զործու-  
նէութեան լայն ասպարեզը: Նա այլ ևս չի այցե-  
լում թագաւորի բանակը, չի խորհրդակցում ըն-  
թացիկ հարցերի մասին: Ի՞նչ պէտք էր անել:

Սրշակը որոշում է վրէժ լուծել Ներսէսից,  
հրամացելով նոր կաթողիկոս ձեռնազրել Զոնակ  
անունով մի անձնաւորութեան: Բայց բոլոր եպիս-  
կոպոսները, բացի Երեքից, հաւատարիմ են մնում  
իրանց հայրապետին ու արձագանք չեն տալիս  
թագաւորի հրամանին, այսինքն չեն դադիս ձեռ-

նազրութեան հանդիսին ներկայ լինելու: Այնու  
ամենայնիւ Զոնակը կաթողիկոս է դառնում...

Միենոյն ժամանակ անդորք նստած չէր Ներ-  
սէսը: Նա շրջում էր երկրի զանազան կող-  
մերը, քարոզում ու մխիթարում էր ժողովրդին,  
այցելում ու բարեկարգում էր իր հաստատած հիմ-  
նարկութիւնները: Այն, նա շարունակում էր զոր-  
ծել իբրև քարոզիչ ու բարեկարգիչ: Նա չէր մաս-  
նակցում միայն քաղաքական զործերին:

Հարկաւոր է նկատել, որ այս վերջին երե-  
ւոյթի պատճառը ոչ թէ միայն Սրշակ թագաւորի  
անձնաւորութիւնն էր, այլ նաև ժամանակակից  
հանդամանքները:

Ներսէսը, իբրև ըրիստոնէութեան, չերմ պաշտ-  
պան, միշտ կողմնակից էր յունասէր քաղաքակա-  
նութեան: Սակայն այդ ժամանակ յունական վեր-  
ջին կայսրների հակաքրիստոնէական զործերն այն-  
քան շատացել էին, այնքան ակներև էին դարձել,  
որ հայոց հայրապետն այլես անկարող էր առա-  
ջուայ ընթացքը շարունակել: Այն, նա չէր կարող  
պաշտպանել ոչ Սրբանոս Կոստանդի գեղձումները  
և ոչ էլ հեթանոս Յուղիանոսի դատապարտելի  
զործերը: Բայց միենոյն ժամանակ նա անկարող  
էր պարսկասէր քաղաքականութիւն քարոզել,  
որովհետեւ երբէք չէր ուղում հակուել գէպի մո-  
գական կրօնը:

Ալգակիսի պայմաններում թաղաւորն ու նա-  
խարարները ստիպուած էին հետեւ տասանւոց  
քաղաքականութեան, որը այնքան էլ նպասակա-  
յարմար չէր կարող համարուել:

Մէծն ներսէս զգում էր այդ բանը, բայց  
հնարաւորութիւն չունէր առաջն առնելու, ուստի  
մնում էր լուել ու յետ բաշուել ասպարէցից:

Ներսէսի հեռանալուց յետով Արշակը աւելի  
ազատութիւն է տալիս իր կրթերին, աւելի հա-  
մարձակ է գառնում, որովհետեւ չկար ալլես նրան  
խրասով, չկար յանդիմանոց: Նա անարդել հալա-  
ծում է, նոյն իսկ կոտորել է տալիս նախարարնե-  
րից շատ-շատերին:

Յաւոլի՛ վիճակ: Օրէցօր սասականում էր  
Արշակի ու նախարարների թշնամութիւնը: Ժողո-  
վրդի մասին մտածող չկար: Երկիրը նման էր ալե-  
կոծ ծովին: Հայաստանը դարձել էր արիւնահոս  
հալածանըների ասպարէց: Նրան ճնշում էին մի  
կողից պարսիկները, իսկ միւս կողմից՝ յոյները:  
Ուրեան ողորմելի էր հայոց թաղաւորի զրութիւնը:  
Նրան չէր սիրում ժողովուրդը. նրան թշնամի էին  
նախարարներն ու մէծամեծները, յոյներն ու պար-  
սիկները:

Ալգոկիսի խոռն պայմաններում հարկաւոր էր  
մի հանհարեկ խելք, որ հաշառութիւն առաջ բե-  
րեր, հարկաւոր էր մի ազգու մէռք, որ չարիքնե-

րի առաջն առնէր: Ո՞վ ունէր այդ խելքն ու ձեռքը:  
Ո՞վ կարող էր կատարել այդ պատասխանառու-  
թիւնը: Միայն ներսէսը՝ ժողովրդի հայրը, թշնա-  
ների պաշտպան ներսէսը:

Ահա այդ պատճառով թաղաւորը անձամբ  
զիմում է նրան, զզում է իր մեղքերը և ազա-  
չում է, որ նա զործի զլուխն անցնի և իր հայ-  
րական խնամքով ու հեռատես խորհրդով վասնզի  
առաջն առնէ:

Եւ ահա նորից կանգնած է ներսէսը հրա-  
պարակի վրայ. նորից սկսում է վառ զործունէու-  
թիւնը: Նա որոշում է կարուկ քայլ անել և խն-  
դրել բացարձակ պաշտպանութիւն պարսիկների  
զէմ: Բայց նախ քան մի որեւէ զործ սկսելը հար-  
կաւոր էր ընդհանուր հաշառութիւն ու համերաշ-  
խութիւն երկրում: Այսաեղ էլ հայոց հայրատպեափ  
ազգու խօսքը կատարում է իր գերը: Թաղաւորը,  
կաթողիկոսն ու նախարարները միաբանւում և մի-  
մանց օգնելու երգում են տալիս: Միայն Մեհ-  
րուժան Արձրունին և Վահան Մամիկոնեանն էին,  
որ չմիացան ընդհանուրի հետ: Նրանք սրտով ու  
հաւատքով պարսից կողմն անցան:

Որոշում է պատղամաւորութիւն ու զարկել  
յունաց կայսրի մօտ և նրա պաշտպանութիւնն ու  
հովանաւորութիւնը խնդրել:

Այդ պատղամաւորութեան պլուխն է ան-  
ցնում Մէջն Ներսէս:

Է.

Հայոց պատղամաւորները կ. Պօլսում լաւ  
լնգունելութիւն են զանում յունաց Վաղէս կայ-  
սրի կողմից և յէտ են վերապառնում մէծ-մէջ  
յոյսերով, բայց առանց Ներսէսի: Կայսրը աքսոր է  
ուղարկում նրան: Ինչու...

Այդ մասին տարբեր կարծիքներ կան: Վա-  
ղէսը կողմնակից ու պաշտպան էր Արիոսի հաս-  
տատած աղանդին և սաստիկ հալածում էր ուղ-  
ղափառ եպիսկոպոսներին: Ահա այդ կրօնական  
տաք պալքարի ժամանակ կ. Պօլիս է մանում  
Հայոց հայրապետք՝ համարձակախօս Ներսէսը:  
Կարո՞ղ էր նա, արդեօք, չեղօք մնալ, ճշմարառ-  
թիւնը չպաշտպանել: Ի՞սարկէ ոչ... նա աներկիւդ  
վէճի է մանում Վաղէսի հէտ և չերծ կերպով  
հերքում է լիշեալ աղանդի բարողած դաղափար-  
ները... Շատ հասկանալի է, որ ալդպիսի համար-  
ձակութիւնը պիտի շարժէր Վաղէսի բարկու-  
թիւնը:

Մէր պատմաղիքներից ոմանը այդ հանգա-  
մանքի հէտ միացնում են և մի այլ միջնադէս:  
Ահա թէ ինչպէս:

Հիւանդ պառկած էր Վաղէսի մի հասիկ որ-  
դին և ոչ մի գեղ ու դարձան չէր ազգում նրա  
վրայ: Վշասախրա Վաղէսը դիմում է Ներսէսի օգ-  
նութեանը և խնդրում է, որ նա իր ազօթքով/  
բժշկէ հիւանդին:

— Յէտ կանգնիք մոլոր նանապարհից, պա-  
տասխանում է Ներսէս, թող Արիոսի սխալամիտ  
դաղափարները և այն ժամանակ ինքը Քրիստոս  
կրժշկէ բռ որդուն: Հակառակ դէպքում մահն ան-  
խուսափելի է...

Զի համոզւում կայսրը, անցնում են պայմա-  
նաւորեալ օրերը և հիւանդը մեռնում է: Զայրա-  
ցած Վաղէսը նորից իր մօտ է կանչում Ներսէսին  
և սպանում է ոչնչացնել նրան: բայց անվախ  
Ներսէսը շարունակում է յանդիմանութիւն ու  
անէծը թափել նրա զիկին:

Այդ բոլորից յետոյ կայսրը հրամակում է  
երկաթէ կապանքներով կապկապել Ներսէսին,  
զցել բանդը և այնտեղ սպանել նրան:

Միայն երկրի մեծամեծների միշամտութիւնն  
ու խնդիրն էր, որ կարողացաւ այդ վճիռը մեղ-  
մացնել առալ:

Մահուան փոխարէն կայսրը հրամակում է մի  
անմարզարնակ կզզի աքսորել Ներսէսին—ուրիշ  
հողեորականների հէտ միասին:

Այդ ժամանակ արիոսեան աղանգաւորներից  
ոմանք զալիս են նրա մօտ և ասում. «Եթէ զու-  
միանաս մեղ հետ, այն ժամանակ մեր հայրը՝  
Մակեղոն եպիսկոպոսը կաղաաէ բեղ աանշանքից»:

Բայց ապարդիւն են անցնում գրանց չանքե-  
րը, որովհետեւ Ներսէս աւելի լաւ էր համարում  
աանշուել և մեռնել ճշմարտութեան համար, քան  
թէ համոզունքներին դաւաճանել անձնապաշտ-  
պանութեան համար:

Սքսորը տեսում է իննը ամիս, ալսինքն մին-  
չև Վաղէս կայսրի մտհր: Որբան զրկանքների  
ու աանշանքների ամիսներ...

Վաղէսի մահից յետոյ արսորականները վե-  
րագրանում են Կ. Պօլիս, իսկ այգաեղից Ներսէս  
շատապում է դէսի Հայաստան, որպէսզի միմիթարէ  
իր որբացած հօտին, որպէսզի նորից շարունակէ  
իր արգիւնաշատ զորձունեութիւնը:

Ի.

Խոկ մինչեւ այդ ժամանակ՝ Ներսէսի բացա-  
կալութեան ընթացքում, ի՞նչ էր կատարուել Հակոց  
աշխարհում:

Դեռ Կ. Պօլիս զնալուց առաջ Ներսէս իր  
փոխարէն աեղապահ է, նշանակում Խագ Կարնե-  
ցուն, որը նրա ձեռնասուն աշակերտն էր և իր

ընդունակութիւնների շնորհիւ սարկաւազութիւ-  
նից հասել էր մինչև Բաղրեանդի և Արշարունիքի  
եպիսկոպոսութեան աստիճանին:

Նա հետեւում էր Ներսէսի ընթացքին, միշտ  
համարձակօրէն յանդիմանում էր Արշակ թագա-  
ւորին՝ ապօրէն զործերի համար և առհասարակ  
ամեն բանի մէջ նմանում էր իր մեծ ուսուցչին:

Արշակը շատ միշոցների զիմեց Խաղին իր  
կողմը գրաւելու համար, բայց անօգուտ, նրա ար-  
դարատէր վարքը փոխել չկարողացաւ՝ ոչ կա-  
շառը և ոչ էլ սպառնալիքը:

Այդ միհնոյն ժամանակ թագաւորը շարու-  
նակում էր իր չարագործութիւնները: Նա նորից  
թշնամացել էր նախարարների հետ, նորից հալա-  
ծանք էր սկսել նրանցից շատերի դէմ: Եւ որքան  
զաժան էր այդ հալածանքը: Իբրև օրինակ վերց-  
նենք Կամարականների կոտորածը:

Արշակ հացկերովթի է հրաւիրում Կամարա-  
կան Արշաւիրի ամբողջ ընտանիքին և նենդու-  
թեամբ սպանել է ապիս բոլորին, որպէսզի աեր  
զառնայ նրանց մեծ կարողութեան: Ապանու-  
թիւնից յետոյ էլ հրամայում է բաշ տալ զիակ-  
ները և շների կերակուր գործնել...

Այդ սարսափելի լուրը հասնում է Խաղին:  
Նա զալիս է և անէծը ու նախարարներ թափում  
անրարիշտ թաղաւորի զլիին: Բայց վերջինս զբա-

չալու փոխարէն քարկոծել է տալիս Խաղին, որը  
հազիւ ազատում է իր ազգականների օդնու-  
թեամբ:

Սակայն այդ գեռ բոլորը չեն: Արշակն իր  
անունն անձանացնելու համար մի նոր քաղաք է  
շինում Մասիսի սառուստում՝ Արշակաւան անու-  
նով: Այդ քաղաքը բազմամարդ դարձնելու նպա-  
տակով նա յախարարում է, թէ այնաեղ բնակու-  
թիւն հաստատողները կազառուին ամեն մի օրէն-  
քից ու դասաստանից, պատժից ու պատախա-  
նատութիւնից:

Նատերի համար հէնց այդ էր հարկաւոր:

Արշակաւանը շուտով լցւում է բնակիչներով.  
բայց ովքէր էին նրանք, — զողեր, աւազակներ,  
մարդասպաններ և ուրիշ աեսակ չարադրմներ,  
որոնք նախարարների երկրից փախել — ազաւինել  
էին այդաւեց: Ահա այդպիսով Արշակաւանը դար-  
ձել էր կատարեալ Սովոմ-Գոմոր:

Պարզ է, որ նախարարները չէին կարող հաշտ  
աչքով նայել այդ նոր քաղաքի վրայ: Նրանք  
ամեն կողմից բողոքում են թափաւորի փարմունքի  
գէմ: Խագ եպիսկոպոսն էլ արծազանք է տալիս  
այդ բողոքներին, չհամաձայնելով եկեղեցի օձել  
Արշակաւանում:

Ահա այդպիսի յարուած զրութիւն էր աի-  
րում չախաստանում, երբ Մէծն Ներսէս վերա-

դարձաւ աբսորից: Բայց ի՞նչ կարող էր անել:  
Նրա խօսքն ու սպառնալիքն էլ չեն ազդում Ար-  
շակի վրայ: Նրա չանքերն էլ չեն կարսղանում  
զողերի և աւազակների այդ բունք խորասիել...

Բայց ի՞նչ որ անկարող էր կատարել մարդ-  
կալին խօսքը, կատարում է բնութիւնն ի՞նքը:  
Շուտով Արշակաւանում սաստիկ ժանախան է  
սկսում, որը մի քանի օրուայ բնթացքում  
ոչնչացնում է 18—20.000 բնաւանիք: Սակայն այդ  
գեռ բոլորը չեն: Նախարարներն իրանց զօրքերով  
յարձակում են քաղաքի վրայ և վերջնականապէս  
քար ու քանդ անում: Ազատում են միայն ծծկեր  
երեխանները՝ բարերար Ներսէսի ձեռքով:

Թ.

Արշակաւանի կործանումն էլ չկարողացաւ  
վերջ գնել չարիքին, չկարողացաւ թափաւորի ու  
նախարարների երկարակութիւնը վերացնել: Երկ-  
պառակութիւն, որքան զոհեր է ատրել նա Հայ  
ժողովրդից, որքան թշուառութիւններ է պատճա-  
ռել նա Հայոց աշխարհին:

Անձիաբանութիւն.—դա մի ներքին որդ էր,  
որ կամաց-կամաց կրծում էր Հայաստանի արիւ-  
նուս սիրար: Բայց ահա նորից այդ որդի հետ  
միանում է արտարին թշնամու աւերիչ հարուածը

և զրութիւնը զառնում է աւելի սղբալի, աւելի անտանելի...

Հայերի դէմ ահարկու փոթորիկ է պատրաստում արեելքում՝ սպարսից աշխարհում։ Շասլուն առժամանակ հանգարա մնալուց յետոյ նոր փորձեր է ձեռնարկում Հայաստանը աիրելու համար։ Ի՞նչ անել։ Պարզ է, որ հայ թագաւորն ու նախարարները երբէք չէին կարող սիրով ընդունել սպարսիկների լուծը։ ուստի սկսում են ընդզիմութեան պատրաստութիւններ տեսնել։ Ներսէսն ու Վասակ սպարապետն են զործի զլուխն անցնում։ նրանք են ընդհանուր համաձայնութեան կենտրոնը, նրանք են ամենքի քաջալերութեան աղբիւրը։

Սկսում է պատերազմը. Երկարաակ ու արիւնահեղ պատերազմ։ Հայերը չեն ստանում յոյների խոսացած օգնութիւնը։ Յուսահաստութիւնը տիրում է ամենքին։ Նախարարները որոշում են ընդունել սպարսիկների հովանաւորութիւնը և խաղաղութիւն կնքել, սակայն Մեծն Ներսէս հակառակուում է այդ որոշմանը։ Նա աշխատում է համոզել, որ հայերն այդ քայլը չանեն։ Նա առաջ է բերում կրօնական ու քաղաքական, մարդասիրական ու երախտազիտական բազմաթիւ փաստեր, բայց ապարդիւն։

Ցըւում են Հայոց զօրքերը։ Պարսիկներն էլ իրանց կողմից դադարեցնում են սպատերազմը և

Շապուհ իր մօտ է կանչում Արշակին, որ իբր թէ պատուաւոր կերպով խաղաղութիւն կնքէն։

Ակամալից Պարսկաստան է դնում Արշակը Վասակ սպարապետի հետ միասին։ Եւ ի՞նչ... Այնաեղ նրան շղթալիկաղ բանարկում են Անյուշ բերգում, իսկ Վասակ սպարապետին մահուան են գատապարտում նրա կատարած քաջազործութիւնների համար։ Ապանում են նրան և մորթին խոսով լցրած ուղարկում են Անյուշ բերգը՝ Արշակի մօտ։ Ո՞րպիսի նենդութիւն, ո՞րպիսի դաժանութիւն...

Գուգալեր լուրը հասնում է Հայաստան և սարսափահար անում ամենքին։ Զղչում են նախարարները, որ չհետեւցին հեռաւես Ներսէսի խորհրդին, զղչում են և ողբում, բայց ի՞նչ օդուտ։ Չարիքը կատարուած էր արգէն և սխալն անուղղելի։

Ուրացող երկու նախարարները՝ Մեհրուժան Արծրունին և Վահան Մամիկոնեան սպարսկական զօրքով մահում են Հայաստան, որպէսզի լրացնեն սարսափների պակասորդը։ Այգովիսով հայր կանդում է հայի վէմ, հայր զառնում է հայի կործանի։ Ո՞րքան ցաւալի իրողութիւն։

Պարսիկներն անխնայ աւերում են հայկական զիւղերն ու քաղաքները, կոտորում են կանանց ու աղամարդկանց։ Երկիրը մածկւում է արիւնով, ա-

մեն աեղ հուր ու սուր, ամեն աեղ ըոնութիւն ու  
տերածութիւն... չարիւր հաղարաւոր ընտանիք-  
ներ զերի են տարւում Պարսկաստան: Ալրում են  
ըրիստոնէական զրբերը, քանզում են տաճարները:  
Տանջում են հոգեսրականներին, բոնաբարում են  
կանանց, կրօնափոխ են անում շատերին: Քանի  
կոյսեր մարտիրոսական ձահ են ընարում իրանց  
պատիւն ու հաւատը պաշտպանելու համար: Քանի  
կանալը հրապարակական տանջանքի և անար-  
դանքի են ենթարկում բոնակալներին չ'հնաղան-  
զուելու պատճառով: Փառանձեմ թաղուհին էլ  
մեռնում է ցցի վրայ...

Սլոտ ամենի լուրը հասնում է խաւար ու մուժ-  
բանուում տանջող Սրշակ թաղաւորին և կարում  
նրա թշուառ կեանքի թելը: Դժբաղդ թաղաւորը  
սաստիկ վշտից ու յուսահատութիւնից զրգուած  
ինքնասպանութիւն է գործում:

Իսկ Մեծն Ներսէս—չալասասանի բարերարն  
ու պահապան հրեշտանիք... Ո՞ւր էր նա և ի՞նչ էր  
անում այդ ժամանակ: Նա ամեն աեղ էր. նա  
ամենքի մօտ էր: Հալասասանի այդ արիւնաս խա-  
ւարում միայն նա է, որ փայլեցնում է յուսով  
կոյժը: Նրա շուրջն են հաւաքրում երկրի մնացած  
ոլմերը: Նրա չանքերի շնորհիւ Մուշեղ Մամիկո-  
նեան—Վասակի որդին—սպարապետ է գտանում,  
ու Պառաստանից էլ վերադառնում է Պապը—Սր-

շակ թաղաւորի որդին՝ յունական զօրքերի ու  
զօրավարների հետ միտսին: Նորից սկսում է ահեղ  
պատերազմ չայսաստանի ազատութեան համար:  
Ինքը Ներսէսն է այդ պատերազմի հողին:  
Նա զօրքի մէջն է: Նա օրհնում է չալոց զէնքերը,  
քաշալերում է զինւորներին ու զօրավարներին, իսկ  
հակատամարտի ժամանակ բարձրանում է մօտա-  
կալ նպատ սարի գաղաթը (ուր գտնում է այժմ  
Ալաշկերակի Ա. Յովհաննու վանքը) և բազուկները  
ապրում աղօթը է անում:

Գիտեն հայերը, որ այնաեղ՝ սարի գաղաթին  
իրանց համար ազօթում է Ներսէսը: Այս դիտեն  
և այդ բանը կրկնակի ոյժ է տարիս նրանց, կրր-  
կնակի քաշութիւն է ներշնչում: Առիւժի նման  
կուում է Մուշեղ սպարապետը. կորիւնների նման  
հետեւում են զինւորները նրա օրինակին:

Փախչում են պարսիկները, կոիւի գաշար  
գիտկներով. ծածկելով: Վերշապէս հնչում է շե-  
փորը, ծածանում է հայերի յաղթական զրօշակը:  
Յաղթութիւն: Եւ այդ յաղթութիւնը իր  
յետեից բերում է Մամիկոնեան Մուշեղ սպարա-  
պետի նորանոր քաշաղործութիւնները, որոնք  
հետպհետէ թեթեացնում են հայերի զդին մանրա-  
ցած լուծը:

Ժ.

Պատերազմը վերջանալուց յետով Մէծն Ներսէս պարտականութիւնն է դնում Պապ թագաւորի և նախարարների վրայ, որ իրար հետ հաշտ ապրեն և միշտ երկրի շահերը պաշտպանեն:

Նրա չանքերով Պապ թագաւորը վերազարձնում է նախարարների այն բոլոր կալուածները, որ նրանցից խել էր Արշակը: Դրանից յետով ինքը Ներսէսը շրջում է գաւառից-գաւառ, բարողում, միմիթարում է ժողովրդին, վերաշինում է աւերակ և կեղեցիները, բարեկարգում է իր հաստատած բարեգործական հիմնարկութիւնները:

Սակայն երկար չի աեւում թագաւորի և կաթողիկոսի սիրալիք յարաբերութիւնը: Պապը հետովին շեղում է խաղաղ ընթացքից և իր վարձունքով դարթեցնում է Ներսէսի զժողութիւնը: Վերջինս անզագար աշխատում է խրատելով ու յանդիմանելով ուղղել նրան, բայց անօգուտ: Թագաւորն սկսում է արգելքներ յարուցանել նոյն իսկ Ներսէսի զործունեութեան դէմ՝ նրա կարգազրութիւնների, նրա բարեգործական հիմնարկութիւնների դէմ:

Եւ ահա այդ լարուած յարաբերութեան ժամանակ վրայ է հասնում Ներսէսի յանկարծակի մահը՝ Խախ աւանում: Մէր հին պատմազիքների

կարծիքով այդ մահուան պատճառը Պապի առւածթոյնն էր \*): Նրանց ասելով Պապը ձանձրացէլ էր Ներսէսի խրամներից ու յանդիմանութիւններից, ուստի և արքայական հաշկերովթի է կանչում նրան Եկեղեց գաւառի Խախ աւանում և կեղծ մէծարանքով խմացնում է թունալից բաժակը:

Մահամերծ հայրապետը Եկեղեցի է մտնում և այնակազմ արտասանում իր «ո զ ո յ ն ո - ն ե ր ք , — ո լ զ չ ո յ ն ք ե ղ » ու Եկեղեցի, ողջոյն քեղ սեղան սրբութեան, ողջոյն ձեղ գասք բահանացից, ողջոյն ձեղ պաշտօնացը և դպիքը ու Եկեղեցւոց: Ես հանապարհորդեցի առ Արարիչն իմ, թողի զժառանդութիւնս իմ և բառ հրամանի բում մէրծեցալ 'ի հող յորմէ ստեղծալ: Ահա հրամաքարիմ ի քէն սուրբ Եկեղեցի, ահա հրաժարիմ ի ձէնչ սիրելի Եղբարք... Ազօթն արարէր վասն իմ հարը իմ, Եղբարք և որդիք, և օրհնեացէ զձեղ Քրիստոս փրկիչն մէր»...

Բայց միայն այդ ազօթքը չէր, որ արտասահնեց Ներսէս մեռնելուց առաջ: Շատերի ասելով նա չայստանի մտսին զանազան գուշակութիւններ է անում, խրատներ է տալիս շրջապատողնե-

\*) Ա. Գարագաշեան այդ բանն անհաւանական է, չամարում և Ներսէսի մահը վերաբրում է կաթուածին... (Քննակ. պատմ. Հայոց: Մասն գ. էր. 145):

թին, օրհնութիւն է կարգում հեռաւորների ու  
մերժաւորների հանցելով և այդ բոլորից յետով ա-  
ւանդում է հաղին (384 թ. \*):

Անսպասելի կորուսար սղի մէջ է գնում ամ-  
բողչ հայաստանը: Լալիս է հայ ժողովուրդը իր  
անզուգական բարերարի մահը: Ողբում է հայոց  
աշխարհը իր պահապան հրեշտակի կորուսար: Լա-  
լիս են նախարարներն ու մեծամեծները, որոնց  
հաշտարարն ու գատաւորն էր. Ներսէսը: Ողբում  
են ձերերն ու որբերը, աղքատներն ու հիւանդ-  
ները, որոնց խնամատար հայրն էր Ներսէսը: Լայ  
ու ողբ ամեն կողմէրում...

Մեծ հայրապետի մարմինը շքեղ հանդիսով՝  
աշակերտների, թագաւորի, նախարարների ու ժո-  
ղովրդի անհամար բաղմութեան ուղեկցութեամբ  
բերում են Եկեղեց գաւառի թիլ տւանը և ան-  
ակեղ թաղում:

Մեռաւ Ներսէսը, բայց անմահ մնաց նրա մեծ  
անունը: Այն, մեծ էր նա իբրև հասարակական ու  
քաջարական գործիչ, իբրև հոգևորական ու դա-  
դափարական մարդ:

Մեծն Ներսէս... Ո՞րբան թանգ է այդ անունը  
ամեն մի հայի համար:


\*) Բատ Մ, եպ. Մուրագեանի, Յուս. եպ. Մովսի-  
սեանի և այլն: Աւրիշ պատմաբանների ասելով՝ Ներսէսի  
մահը տեղի է ունեցել 373 կամ 374 թուականին:



### ՄԵՐ ԱՂԲԻԿԻՐՆԵՐԸ

1. Դ. վ. Ալիշան՝ «Սովերք հայկականը» հատ.  
Զ և է:
2. Փաւստոս Բիւզանդացի՝ «Պատմութիւն հայոց  
՚ի չորս գպրութիւնս»:
3. Ա. Մ. Գարագաշեան՝ «Քննական պատմու-  
թիւն հայոց» – մասն Գ:
4. Մովսէս Խորենացի՝ «Պատմութիւն հայոց»:
5. «Լումայ», գրական հանդէս 1901. գիրք Բ:
6. Հ. Կոսդ վ. Յովնանեան՝ «Մեծն Ներսէս և  
հայաստանի վրայ ունեցած աղդեցութիւնը»:
7. Հ. Մ. Աւգերեան՝ «Վարք Սրբոց»:
8. Յով. վ. Թորոս՝ «Ընտիր հայկաղունք»:
9. Ն. Գ. Զարբանալեան՝ «Հայկական հին զրպ-  
րութեան պատմութիւն»:
10. Ս. Պալասանեան՝ «Պատմութիւն հայոց»:
11. Մ. եպ. Մուրագեանց՝ «Պատմութիւն հայա-  
տանեալց Առաքելական ո. Եկեղեցւոյ»:
12. Յուս. վ. Մովսիսեան՝ «Հայաստանեալց Առա-  
քելական ո. Եկեղեցւոյ պատմութիւն»:





Հայաստանի Ազգային գրադարան



NL0428101

